# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2025 թվականի N 701

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ.ՄԵԾԻ 10/1Փ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՍՏԵԼՍՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍՏԵԼՍՈՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արթուր Սամվելի Սուքիասյանի 18.12.2024 թվականի թիվ 01/21378 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1865224 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 04 փետրվարի 2008 թիվ 163 որոշումը, 04.02.2008 թվականի թիվ 106 հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիրը,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տ. Մեծի 10/1 փ հասցեում գտնվող ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.0 քմ մակերեսով մակերեսով հողամասը նախապատվությամբ վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել «ՍՏԵԼՍՈՄ» ՍՊԸ-ին:
2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ «ՍՏԵԼՍՈՄ» ՍՊԸ-ի տնօրենի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0 քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր:Վարձավճարների չափը սահմանելով՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 24 (քսանչորս) դրամ: Աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 702

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սալվի Մելիքի Ստեփանյանի, Էդմոն Հրաչիկի Մալխասյանի և Մարինե Հրաչիկի Մալխասյանի 08.01.2025 թվականի թիվ 02/88 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1742045 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 04.04.2024թ ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1820 (նոտարական ակտի կոդ: 741-20240402-84-7830474) վկայագրերը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Գուգարք թիվ 10 շենքի 4 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե, Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 10 շենք, 4 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 703

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՈՒՄ ՓՈՂՈՑ 18 ՇԵՆՔ, 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահան Կարենի Չոգինյանի 17.02.2025 թվականի թիվ 2293 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 02122024-06-0058 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Բազում փողոց 18 շենք, 28 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վ. Համբարձումյան փողոց, 18 շենք, 28 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 704

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2477 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Գագիկի Օհանյանի Ծովինար Թադևոսի Վարդանյանի կողմից լիազորված անձ 10.03.2025 թվականի թիվ 02/3307 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 05 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2477 որոշումը,03.03.2022 թվականի թիվ 1919 լիազորագիրը, /նոտարական ակտի կոդ: 763-20220412-64-5824682/ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 05 նոյեմբերի 2477 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց 44 հասցեում գտնվող Գառնիկ Գուրգենի Օհանյանի Արսեն Գագիկի Օհանյանի, Գեղամ Գուրգենի Օհանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները երեք առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 2477 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 2-րդ կետի ա ենթակետում «44» թվերը փոխարինել « 44/2» թվերով

2. Որոշման 2-րդ կետի գ ենթակետում «44/2» թվերը «44» թվերով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 705

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՎԱՆԱՁՈՐ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 88/1 ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 88/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ԱԼԲԵՐՏԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԱԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ալբերտի Շեկոյանի 10.03.2025 թվականի թիվ 02/3358 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08032025-06-0003 և թիվ 04042024-06-0043 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /225642/, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Միավորել Վանաձոր համանք քաղաք Վանաձոր Երևանյան խճուղի 88/1 և Երևանյան խճուղի 88/4 հասցեներում գտնվող Արթուր Ալբերտի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.047214 հա ընդհանուր մակերեսով հողամասերը համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Երևանյան խճուղի 88/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 706

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Տեր-Մակարովայի 01.02.2024թ. թիվ 02/2261 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31072024-06-0058 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 28 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք համայնք Վանաձոր գյուղ Դարպաս վարելահող հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 10.632հա մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 10897800 (տասը միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր) դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Աննա Տեր-Մակարովային:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Աննա Տեր-Մակարովայի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 10.632հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 707

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ Ք. ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑ 7/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտա Գուրգենի Հարությունովայի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02102024-06-0026 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 48 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց թիվ 7/11 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 0.00198 հա մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02102024-06-0026 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Մարգարիտա Գուրգենի Հարությունովային՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Մարգարիտա Գուրգենի Հարությունովայի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 0.00198հա մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 400 (վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 708

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 4/15
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՍԵՐՅՈԺԱ ՇԱՎԱՐՇԻ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Շավարշի Աբովյանի 07.03.2024 թվականի թիվ 02/4775 դիմումը,Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12122024-06-0066 վկայականը, Սերյոժա Շավարշի Աբովյանի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1927678 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 13 մայիսի 2024 թվականի թիվ 28 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 4/15 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 440.5 քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12122024-06-0066 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 1956613/մեկ միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր տասներեք/ ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սերյոժա Շավարշի Աբովյանին հողամասի ընդլայնման նպատակով:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Սերյոժա Շավարշի Աբովյանին հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 440.5 քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2025 թվականի N 709

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑԻ 19/2 ՌԵՍՏՈՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՐԵ ՊԱՐՍՊԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՍԵՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմվել են արձանագրություն և զեկուցագիր, որոնց հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 18 նոյեմբերի 2024թ. տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 19/2 հասցեում գտնվող «Մասուր» ռեստորանին կից արևմտյան հատվածում սեփականության իրավունքով Հակոբ Վարդանյանին և Արգամ Մուղդուսյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցված քարե պարսպի փաստով 2024 թվականի նոյեմբերի 18-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լսումներ սույն թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 10:30-ին: Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 19/2 հասցեի սեփականատերեր Հակոբ Վարդանյանը և Արգամ Մուղդուսյանը ներկայանալով վարչական վարույթի լսումներին հայտնել են, որ իրենք դեմ չեն եղել, որ վերը նշված հասցեի հարևանը ամրացնի երկու շինությունների միջև գոյություն ունեցող վթարված պատը, սակայն տեղյակ չեն թե ով է կառուցել նշված քարե պարիսպը:

Անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել վարչական իրավախախտում կատարող անձին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

Փոխօգնության կարգով 24.11.2025 թվականին ՀՀ ՆԳՆ Տարոնի բաժին է ուղարկվել թիվ 01/13310 գրությունը, իրավախախտում կատարած անձին բացահայտելու նպատակով որի արդյունքում 10.01.2025 թվականի 58/2-57 գրությամբ հայտնել են, որ «Մասուր» ռեստորանի ետնամասում գտնվող պարիսպը կառուցված է Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 17/1-1 հասցեում, որը սեփականության իրավունքով պատկանում է Վանաձոր քաղաքի Վարդանանց 17 հասցեում հաշվառված Լյովա Կարապետյանին: Միաժամանակ վերջինիս որդի Արտակ Կարապետյանը հայտնել է, որ իրենց սեփականությանը կից, Վարդանանց 19/2 հասցեում շուրջ 15 տարի գոյություն ունեցող պարիսպը «Մասուր» ռեստորանի շենքը կառուցելու ընթացքում վնասվել է, որից հետո վերջիններս իրականացրել են հիշյալ պարսպի շինարարական և ամրացման աշխատանքներ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22 հունվարի 2025 թվականի ներկայացված զեկուցագրի համաձայն, լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վերոհիշյալ ինքնակամ կառուցված քարե պարիսպը կառուցվել է երկու տնատերերի միջև և դեռևս հնարավոր չի եղել պարզել իրավախախտում իրականացրած անձին:

Սույն թվականի փետրվարի 7-ին ժամը 10:30-ին կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին պատշաճ ծանուցվել և ներկայացել են Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 19/2 հասցեում գտնվող գույքի սեփականատերեր՝ Հակոբ Վարդանյանը և Արգամ Մուղդուսյանը և կրկին հայտնել են, որ հիշյալ պարիսպը իրենք չեն կառուցել և կառուցվել է իրենց սեփականության իրավունքով պատկանող ք. Վանաձոր Վարդանանց փ., 17/1-1 հասցեում: Արտակ Կարապետյանը և Լյովա Կարապետյանը վարչական վարույթին ծանուցվել են, սակայն փոստային առաքման հետադարձ կտրոնները չեն ստացվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 14-րդ կետի 1) ենթակետի համաձայն՝ եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝ 1) ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետի համաձայն միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

Հիմք ընդունելով վերոգրյալը, կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ 2025 թվականի փետրվարի 18-ին, որին Հակոբ Վարդանյանը և Արգամ Մուղդուսյանը պատշաճ ծանուցվել և ներկայացել են լսումներին, կրկին պնդել են իրենց նախկին դիրքորոշումը: Ինչ վերաբերվում է Արտակ Կարապետյանին և Լյովա Կարապետյանին, ծանուցագրերը ուղարկվել

են սակայն փոստային առաքման հետադարձ կտրոնները կրկին չեն ստացվել, այդ իսկ պատճառով ծանուցագրերը տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում («azdarar» 13.02.2025 թվականի թիվ 1618003, թիվ 1618006):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ 1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝համայնքի ղեկվարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառուցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով

պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետով, 245-րդ, 279-րդ, 283-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով, 29.1 հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով, 49-րդ, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1.Քանդել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 19/2 հասցեում, սեփականության իրավունքով Հակոբ Վարդանյանին և Արգամ Մուղդուսյանին պատկանող հողամասում կառուցած ինքնակամ պարիսպը՝ վերացնել հետևանքները:

2.Քանդման աշխատանքների վերահսկողությունը դնել Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 21
ք.Վանաձոր